


Դ. ԴԵՄԻՐՃԵԱՆ

ԴԵՊԻ ՏԻԵԶԵՐՔ



331.33
7-25


19 NOV 2011

№ 10 «ՀՈՐ ՀՈՍԱՆՔԻ» ԳՐԱԴԱՐԱՆ № 10

10R

Դ. ԳԵՄԻՐՃԵԱՆ

ԴԵՊԻ ՏԻԵԶԵՐՔ




ԹԻՖԼԻՑ

Տպարան Ա. Մ. Կերեսկիձէի, Գաբուսկի 1.

1913

0 2 MAR 2013
R03 VON 21

27897



1769

39

ԴԷՊԻ ՏԻԵԶԵՐԲ

Տեսնել էք դուք էն շահիրին,
նա, որ գալիս հին դարերից
Ականատես հին ազգերից:
Պօսում է և ծիւ ազգերից:
Գուցէ ասէք թէ ո՞վ տեսաւ
էս անցքերը դիւցազնական.
Գուցէ ասէք թէ ո՞վ ասաւ
էս երգերը հէքիաթական. —
Քարձունքներով. Հինդուստանի
էս երգերին ականջ դրին,
Թէ բովերում Միջագետքի՝
Մօտիկ հպարտ Կովկասներին: —

Եթէ հարցնէք՝ մենք կրգնանք
էն դաշտը հին Արարատեան,
Ուր կանգնած է երկնահասակ,
Մասիսը ծեր, հնադարեան:
Կանգնած է նա իբրեւ արձան,
Երեք անհուն աշխարհների.
Նրա մօտով եկան անցան
Ազգերը գոռ հին օրերի:

Նրա գլխից Նօէն բերաւ
 Կենդանութիւն ու մարդկութիւն,
 Ու էն դաշտի միջում դրաւ
 Էն առաջին օջախն ու տուն:
 Նօէն էր էն շահիրը հին
 Էս երգերի զիւցազնութեան
 Նա, որ տեսաւ էն առաջին
 Առաւօտը մեծ մարդկութեան:

Դէ, լսեցէք, որ չըհարցնէք
 Թէ որ զրբից արքաների,
 Ո՞ր աշխարհի հէքեաթներից
 Եկան վէպերն էս ազգերի:

Բ

Երբոր Նօէն կրակ արաւ
 Տաքացրեց աշխարհն էլի,
 Երգեց՝ ձեռին գինի ու գաւ
 Երգն առաջին յոյսերովի:

Երբ որ ապրեց ու մոռացաւ
 Տարիների թւերն անվերջ,
 Թողի ծոռի հաշիւն անցաւ
 Արարատեան օջախի մէջ,—

Կանչեց իր մօտ որդիներին,
 Սրանց բոլոր թոռնիկներին,
 Ու մարդկութեան էս ակներին
 Էսպէս դարձաւ ու խրատեց:

—Էհ, ծերացայ՝ ինչ երկրի հող
 Ճերմակեցի Մասիսի պէս.
 Ոնց տեսնում եմ չըմոռացող
 Մահի մտքից ընկել եմ ես:

Ես ինձ կը տամ շահիրութեան...
 Դուք ապրեցէք ու բազմացէք,
 Լցրէք դաշտերն Արարատեան,
 Միայն չընի հետուն ցրէք:

Եւ այսուհետ որ չըմոռնաք
 Ձեր տապանի վէպերը հին՝
 Բան ու գործից երբոր դառնաք՝
 Արիք լսէք ձեր շահիրին:

Ականջ դրին ու... խոստացան
 Խօսքը պահել ծեր շահիրի,
 Ելան խումբ-խումբ ու հեռացան
 Ամեն կողմերն էս աշխարհի:

Ու էստեղից մինչև Մօն-Բլան,
 Մինչև Նօէն Միահ-Պօշի,
 Մինչև Թախթը Սողոմոնեան
 Աժդահիցեղ Հինգուքուշի,

Տապանի վէպն հետներն տուած՝
 Ճամբայ ելան տոհմերը սէզ,—
 Ով Յոյսինն էր՝ դէպ Արևմուտք,
 Ով Ոչնչին՝ դէպ Արևելք:

Մինը ավերն էն խաղաղի
Շինեց մահիձ, շուրջը պատեր,
Խորհրդածեց իր Նիրվանան,
Բունը տարաւ, քնեց դարեր:

Մինն էլ գնաց էնտեղ, ուր գոռ
Մրմռում է Մէշասերէն,
Ուր՝ Ամազոնն հոսում է խոր
Երկնքի պէս ովկիանի դէմ:

Մի բազուկն էլ գնաց յախուռն
Ու դարբընեց իր ցեղերով
Աֆրիկան մեծ, խաւարակուռ՝
Բերբերներով, նեամնեամներով:

Ծուխ ոլորեց Տետոններում,
Կղզիներում Ովկենական,
Ծուխ ծառացաւ Սկոտներում,
Սառոյցներում աստանդական:

Շէնացրին, ձէնձընեցին,
Ուրախացրին աշխարհ-արար,
Բազմանալով ջուլնըւեցին,
Ու... խորթացան յետոյ իրար:

Գ.

Մնաց մենակ շահիր Նօէն
Լեռնադաշտում Արարատեան,
Ու սպասեց շահիր Նօէն
Թէ գան իր մօտ, թէ երևան:

Տեսաւ չեկան՝ իր սագն առաւ՝
Գնաց ընկաւ արար-աշխարհ,
Թափառակսն կմախք դառաւ
Ճամբաներից երկար-երկար:

Եւ ուր չեղաւ շահիր Նօէն՝
Այցելելով ամեն մէկին...
Ժամանակը ըսպիտակեց
Գետանման նրա միրքին:

Բայց ոչ սևերն էն Աֆրիկի,
Դեղինները Չինայ միջում,
Ոչ կարմիրներն Ամերիկի
Չէին նրան էլ ճանաչում:

Տեսաւ եանկուն, տեսաւ հինգին
Պրէրիաներում, պամպաներում,
Տեսաւ ռուսին, տեսաւ չուդին
Տունդրաներում, ստէպներում:

Ու հարցրեց. «Ո՛ւր էք գնում»:
— Մենք գնում ենք մեր արտը նոր:
Ու հարցրեց. «Ո՛ւր էք գնում»:
— Մենք գնում ենք անտառը խոր:

— Գոռը չէք գնում ձեր արտը նոր,
Դուք չէք գնում անտառը խոր,
Եւ չէք գնում սար ու ծովեր, —
Դուք գնում էք Մասիսն ի վեր...»:

Ու սագը հին բարձրացրեց՝
Հնոց երգեր մէջը պահած,
Օգի միջին տարաւ բերեց,
Ու հին ձայնով մին որոտաց:

— Է՛յ, ումն է դուռն էս աշխարհի,
էն ո՞ր ցեղին չըկայ էլ վերջ,
էն ո՞ր ազգին պիտի լինի
Մասիաների շուրջը ու մէջ:

Ապա տեսնեմ ո՞վ է գալիս
Անվախների ահեղ ճամբան,
էն ո՞վ կը գայ դէպի Մասիս
Ասելու մեզ իր վերջաբանն»:

— Ելէ՛ք, ասին ազգ ու ազինք,
Գնանք էստեղ բանանք մեր վէճ.
Գնանք էստեղ ասենք թէ ում
Պիտի մնան փառքերն անվերջ»:

Դ

Ու էն բոլոր աշխարհներից,
Ուր հին զարմեր կային արի,—
Կովկաս քարի սառոյցներից,
Ստէպաներից սկիւթների,

Աւազներից եգիպտական,
Ադմուկներից Միջերկրի,
Գորգոռալով ելան եկան
Ազգ ու ազինք գոռ ու արի:

Եկան ինչպէս... վեհ, ալեհեր,
Ահանատեա վաղ օրերի,
Եկան ձայնեն ձայներով ծեր
Մեծ ապագան մեծ ազգերի:

Եկան տեսնեն Արարատեան
Հին օջախը դաշտի միջին,
Ուր որ լսւեց նոր մարդկութեան
Կանչերը թարմ ու առաջին:

Ծերուկ Նոյն էլ իր սապն առաւ,
Գնաց նստեց Մասսի քարին,
Մասսի քարին ամպերի մէջ,
Ճերմակ՝ նման էն ամպերին:

Ե

Ու Արագի հնոս ափին
Բացին մի լայն հրապարակ.
Պաշարեցին Նօէ պապին
էն ազգերը բոց ու կրակ:

Ու ցոյց տւին Մասիսն հսկայ,
Աշխարհի մօրն արծաթահեր,
Ասին «Թող սա կանգնի վկայ
Թէ ո՞ր ազգը կըդառնայ տէր»:

Ու նստեցին ծալապատիկ՝
Ասէն ամպեր (սեղեղորեցին),
Ու խատուտիկ, պտպտուրիկ
Վիշապի պէս նախշեցին:

Բայց ով ներկեց, էն ով ծռեց,
Սրանց դէմքերն այլակերպեց,
Մի հօր որդիքն այլափոխեց,
Որ խորթացան իրար էսքան:

Նայիր սրանց... էս նաշխունիկ,
Ազգի ազգի կապաներին,
էս շիկափուկ չէքմէքներին,
Ոսկեկարած չալմաներին:—

Կարծես հիմի պիտի ծփար
Ծափեր համուռ մի հաշտութեան,
Կարծես հիմի կրբունեն պար
Յուներժական ուրախութեան:

Կարծես հիմի... սակայն իզուր—
Իրար ոտիս՝ իրար դիմաց
Բացին մի վէճ հազարլեզո՛ւ
էն ծեր դաշտում՝ ազգերի բեմ:

Ու նայեցին ազգերն իրար
Սևաթորմի արաբներին
էն դեղնաւուն նողայներին
Ճերմակադէմ չէրքէզներին...

Մէկ էլ՝ ահա տրտնջացին.
«էս ի՞նչ անկարգ ու դովռան՝

եկան էսպէս խոնւեցին
Մասիսների մեր հին դռան:

Սրանց շէնքսին, սրանց մտիկ...
էս ովքեր են սիրիացին,
Ի՞նչ են ուզում հայ ու տաճիկ,
Թաթար-մաթար, էս վրացին»:

2

Ու ազգերի էս անտառից
Բուքեր տեսած գէլի նման,
Իր դաշոյնի սառ աչքերով
Ելաւ թաթար դէմ-յանդիման:

— Էդ ո՛ւմ վրայ մեծաբերան
Ղուվացիք դուք ձեր միջում՝
Լեզուներդ գազ ու գերան.—
Դուք թաթարի՞ն չէք ճանաչում:

Հարցում արէք կիրգիզներին,
Ջունգարներին, կալպակներին,
Չարթեցրէք իմ Բայքալին,
Թող նա մասի՛ ով էր թաթար:

Բուքի նման պրծան եկան
Հօրդաներըս Բայքալն ի վար,
Բուքի նման թափառական
Հայրենիքներ փոխելով յար:

Ու ծառացան Եւրոպն ի վեր,
 Զարկին նրա կրծքին հսկայ.
 Ու ետ դառնալ էս բնաւեր
 Հօրդաներին երբէք չըկայ:

Ձէն տամ Թիմուր—Չինգիզխանին,
 Ու վեր կենան հօրդա-հօրդա,
 Զարթեցնեմ չար Բաթուին՝
 Աշխարհ ու հող փախչի երթայ»:

Ծով ազգերից մի ուրւական
 Արձանացաւ թաթարի դէմ.
 Ու ազգերի աչքերն ընկան
 Էն պատկերին խոթողադէմ:

— Իսկ արաբին ինչ ես անում.
 Խօսեց ուրուս Արեդարձի.—
 Թէ աշխարհը էլ չի տանդւմ
 Մի հատ գոնէ արաբացի:

Գիտե՞ս ուր է սիրտն Իսլամի
 Կամ գլուխը նրա հպարտ.—
 Գնա, հասնես՝ սիրտը—Մեքքան
 Եւ գլուխը գոռ Սամարկանդ:

Ելնեմ մին էլ հըով սրով,
 Դաշտի նման, համրատատան,
 Բանամ դարսլասն էս աշխարհի
 Հեղեղի պէս քանդեմ երթամ:

Յանկարծ գունատ, ոխակալած,
 Գերեզմանից ելածի պէս,
 Ինչպէս մի մարդ օձի կծած՝
 Թուաւ տեղից հրէան վէս:

Բա Իսրայէլն. ասաւ հրէան.
 Իսրայէլը կորչի գնալ,
 Փարաւոններ, բուրգեր տեսած
 Իսրայէլը անհետանալ:

Եհովան չէր խօսեց ինձ հետ՝
 Ահեղասաստ բարբառելով,
 Հազարամեան չառաւ Իրան
 Սպասեմ ես դիմանալով:

Աւագ-աւանգ կը հաշւեմ ես
 Դանդաղ օրերն Իսրայէլի,
 Մինչև հատ-հատ կը գայ հրէան
 Ելնելու դէմք իր Փրկողի»:

Էս որ ասաւ մռայլեցին
 Մեծ-մեծ գետերն էն ազգերի,
 Յետոյ քահ-քահ ծիծաղեցին
 Ջրվէժներով ծիծաղների:

Ե՛ս կը մնամ—գոռաց զպտին,
 Ե՛ս, կռնչաց սիրիացին,
 Ե՛ս, յովորտաց ասպետացեղ
 Հպարտ կանգնած սէգ վրացին»:

Ծիծաղ գնաց, և ի՞նչ ծիծաղ,
Բիւրաբերան, ովկենական.

Եւ գողոցներ ուրախ ուրախ
Թափառեցին ու ետ եկան:

Ու նստած է նօէն հպարտ
էն ազգերի ամալի միջում:
Ու նայում է ծեր ու հանդարտ
Թէ ազգերը հնց են վիճում:

է

Ու վեր կացան դէպի նօէն
Գուշակները էն ազգերի,
Բարձրացրին ձեռքերը ծեր,
Որ նա իրենց դատը կտրի.—

«Զարկ մի անգամ քո հին սագին,
Զարկ ու կտրիր կռիւն ու վէճ:
Թող ամենքին քո սագն ասի՝
Ու մն է Մասիսի շուրջը ու մէջը:

— «Ես չեմ գարկի իմ հին սագին,
Ես չեմ կտրի ձեր խօսքն ու վէճ,
Ժամ չէ գիտնալ՝ ում կը մնայ
Զեր Մասիսի շուրջը ու մէջը:

Ը

Մի անծանօթ ազգ էր գալի
Հիւսիս կողմից ամպակուտակ,
Ծովի նման ցոլք էր տալի
Զէնք ու զրահն արևի տակ:

Հետ գալիս էր, հետը լցում,
Ժնչպէս գային աշնան մութեր,
Եկաւ քաշեց սանձը ձիու
Կանգնեց որպէս մթին գիշեր:

Ո՞վ է էս ազգն օրհասական.
Հարցում արին ազգ ու ազինք
Ու իր բարձրից պաւական.
Եկորն էսպէս խօսեց սաստիկ.

— Ի՞նչ ես ասում թէ ո՞վ եմ ես.—
Դէ ել, անցիր դաշտերս հազար,
Գնա, գնա, թէ որ հասնես
Զուգչաների աշխարհը սառ:

Ո՞վ է տէրը չուվաշների,
Բաշկիրների, կիրգիզների,
Մըմ առաջ են ետ ետ քաշւել
Տէրերը գող Ալթայների:

Ազգ ու ազինք ճամբայ կը տան,
Որտեղից որ ուռսը հոսի
Ու փառքերից սլաւի տան
Մութ Աֆրիկան դեռ պիտ' խօսի»:

Պապանձւեցին ազգեր չորս դին
Ժնչպէս չքստառ փոթորկից ետ,
Ամպերի պէս լուռ ու մթին
Ընկան իրենց մտքերի հետ:

Ու նայում է էն ամպերից
Նօէն հպարտ, ամպտհասակ
Ու ազգեր է տեսնում բարձրից
Որ չի տեսել և ոչ մի ազգ:

Թ

Ամպեր ելան յորանջելով
Դանուբական մշուշներից,
Թէ քայլ առան տատանւելով
Հսկայ դեբր մութ աշխարհից:

Ճակտին դրին ձեռքերը ծեր
Ազգ ու ազինքն Արևելքի.—
Սա ի՞նչ ազգ է բղխեց էլի
Հորիզոնից յանկարծակի...

— Դարձէք, ասա՛ւ՝ աչքերն հեռուն՝
Ռուսը՝ արծիւն հպարտագին,
Եւրոպն է դա, մահ է փնտրում
Սլաւական պողպատ ձեռքին:

Օրօրւելով, տարածւելով
Անդունդներից վերև եկան
Եօթն եղբայր՝ եօթն տիտան
Եօթն ազինք հսկայական:

Ձանգ ու գրանգ, դանգ ու գրանգ,
Քարէնի պէս շարան-շուրան
Դմբդմբալով եկան նրանք
Արևելքին դէմ յանդիման:

Ու նայեցին սպառնալից
Արևելքին եօթն տիտան:
— Ո՛ւմ աշխարհն էք բաժնում էդտեղ—
Որոտացին եօթնբերան:


— Ո՛ւ կը մնայ... Ես կը մնամ.
Գոռաց հպարտ Գալլը հսկան:
— Ո՛չ, թէ մնամ՝ Ես կը մնամ
Խօսեց ուրուն տետոնական:

Առաջ եկաւ Անգլ հսկան
Մառախլադէմ ինչպէս ովկեան.—
Ի՞նչ, պտրում էք ու չէք գտնում
Աշխարհի տէրն յաւերժական...

Աղջամուղջից ովկեանների
Գալիս եմ ես ուժը բազկիս
Ու գնում եմ անյայտն հեռու
Որ գրել է գիրը ճակտիս:

Գալոց ռազմեր մրմռացին
Խօսքերի մէջ նոր ազգերի
Ու ամենքը պատրաստուեցին
Կոտրել դարպասն էս աշխարհի:

Ո՛ւ է, ասին, ազգը ձեզնից,
Որ ապրում է հնուց էտեղ:
Առաջ եկաւ էն ազգերից
Հայը տոկումք ու հնացել:



Ելաւ եկաւ իր հին տնից
 Էն աշխարհից եկածի պէս.
 Ու նոր ազգերն իրենց բարձրից
 Հարցում արին նրան էսպէս.—

Էն ի՞նչ անդունդ ամենակուլ
 Ասում են կայ էս մեր ճամբին,
 Որ քաջերին զցում է դող
 Օրհասական իրեն ափին:

Ողջոյն տւեց հայր նրանց
 Ու հեղ խօսեց հանդարտաբան.
 Խաղաղ կացէք, թող մի սրտանց
 Երգւի երգը խաղաղութեան:

Թող իր թառից Գալլը խօսի,
 Նա աքլորն է մեր մարդկութեան,
 Թող ովկեանում լայն օրօրւի
 Ծովում ծնած Բրիտանիան:

Թող Տևտոնն ու Ռուսն էլ պահեն
 Կշռութիւնը Եւրոպայի,
 Որ չթափւի Եւրոպն Ասիա,
 Տակով անի տունն ազգերի:

Բայց թէ ճամբան դուք փնտրում էք⁽¹⁾
 Անվերադարձ, օրհասական—
 Սա է ճամբան, ուր կանգնած էք,
 Անցնելու են ովքեր եկան:

Ժ

Քանգեց Նօէն իր սագը հին,
 Ոսկելարած ու լիակուրծ.
 Հարերը դեռ դողում էին
 Երգերից վեհ և հինաւուրց:

Ու երբ լսեց ամբոխը մեծ
 Նման անհուն ստեպներին,
 Սրտատրոփ երբ սպասեց
 Նոյի վերջին պատգամներին՝

Ձարկեց սագին շահիր Նօէն.
 Ձարկեց ինչպէս.—ինչ փոթորիկ.
 Ու ճօճելով սագը օդում՝
 Թունդ որոտաց ինչպէս մրրիկ.—

Ողջոյն, ազգեր, դուք մարդկութեան
 Գետեր, ծովեր մեծ սրտանի,
 Ձեր կուլի մէջ յաւերժական
 Դուք որդիներ մի Անհունի:

Գիտէք թէ ով կը մնայ էստեղ...
 Եւ ոչ մէկիդ չըկայ մնալ.
 Կը մնայ մի ազգ հազարացեղ,
 Հազարվտակ, հազարծաւալ...

Գիտէ՞ք թէ ով կը ֆնայ էստեղ...
 Է՛հ, շատ գեաեր դեռ պիտի գան,
 Գոռան, լցւեն անդունդն անեղ
 Հաղարվտակ մեծ մարդկութեան.—

Մինչև լցւի բերնէբերան
 Մեծ մարդկութեան ովկեանը մէկ,
 Ու ամենքը մէկտեղ կերթան
 Դէպի Ինքը՝—մեծ Տիեզերք...

~ ~ ~



«ՆՈՐ ՀՈՍԱՆՔ»-Ի ԳՐԱԴԱՐԱՆ

№ 1	Շրջակայից հեռացված	20	դ.
№ 2	Շրջակայից հեռացված	10	դ.
№ 5	Վարժուհին Միք. Մանուկեան	5	դ.
№ 6	Կին հին	10	դ.
№ 10	Դեպի Տիեզերք Դ. Դեմիրճեան	10	դ.

ԳԻՆԸ 10 ԿՈՊ.

